ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

N 17/17.4/4526-2023 «29» 12 2023թ.

ԱՁ ՀՐԱՆՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ
(*ՀՀ, Արարատի մարզ, գ. Այնթափ*)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Համբարձումյան,

ՀՀ ԿԵ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) 2023թ. կարիքների համար սեղանի համակարգիչների մատակարարման նպատակով՝ վարչապետի աշխատակազմի և ՀՐԱՆՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՁ-ի (այսուհետ՝ ԱՁ) միջև 27.10.2022թ. կնքվել է N ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ 23/5-1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 1 396 000,8 ՀՀ դրամ ընդանուր արժեքով, իսկ մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել ըստ պայմանագրի 25.12.2023 թ.:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է նույն պայմանագրի N 2 հավելվածով:

Գնման գործընթացի պատասխանատու ստորաբաժանում հանդիսացող տեսչական մարմնի 26.12.2023թ. թիվ 01//2175-2023 գրությամբ ներկայացված հավաստմամբ՝

«Հրանտ Համբարձումյան ԱՁ-ին բազմիցս բանավոր և գրավոր ծանուցվել է մատակարարման և հետևանքների մասին, սակայն Հրանտ Համբարձումյան ԱՁ-ի կողմից մատակարարումը չի կատարվել:»:

Պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 15 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՁ-ն խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները և հիմք ընդունելով Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կոզմից ներկայացված՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու առաջարկը, վարչապետի աշխատակազմը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է 26.12.2023թ. կնքված N ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ 23/5-1 ապրանքի մատակարարման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Միաժամանակ, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Միաժամանակ հայտնում եմ, որ սույն ծանուցմամբ պատվիրատուն ապահովել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ

Կատարող՝ Լուսինե Գասպարյան
Գործերի կառավարչի տեղակալ
Հեռ. 515663
Էլ փոստ՝ lusine.gasparyan@gov.am